




ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գինն և Պոլսոյ հար 8 Մլճ.
» Գաւառաց » 10 Մլճ.
Վեցամեայ կ. Պոլսոյ » 4 Մլճ.
» Գաւառաց » 5 Մլճ.
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.
Յանուարեան տոգը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դուրուշ, աւելի անգամներու
համար դատ սակարկութիւն կրկնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՄԱՐՏ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 12 մարտ.

Ետիմուրիի դուքսն ու զբոսահին
այսօր հանգիստ Լոնտոն մտան թաղու-
հայն հետ: Թէ և շատ ձիւն եկած էր, փո-
ղոցներուն մէջ անթիւ բազմութիւն կար,
որը անպատու համակրութիւն ցոյց տը-
ւին:

Պէրլին 12 մարտ.

Պիտարը իշխանը հիւանդ է:

Սթէնը 12 մարտ.

Երեսփոխանական ժողովը Պ. Լոնտոն-
ոս երեսփոխանին քանի մը ռաւաւարա-
կան խօսքերէն յազուելով՝ յայտնեց թէ
սպիտակ գլխով մը բովանդակապէս սահ-
մանադրական միապետութեան յարեալ է:
Վիեննա 11 մարտ.

Եպիսկոպոսաց անուանման ժամանակ
տալիք երգման ձեւը՝ զոր կառավարու-
թիւնն առաջարկած էր, երեսփոխանա-
կան ժողովէն ընդունուեցաւ:

Պորսպին մէջ դործերը քիչ են, ի բաց
տուեալ Աստուր—Սթանիսլասի լա-
ժինները՝ որք փնտառուցան:

Բէշթա 11 մարտ.

Կոյսրն այցելութիւն տուաւ Պ. Տիքի
Վիեննա 12 մարտ.

Գաւառական օրինաց շուտով դործադ-
րուելու շահուն հրամար կառավարութիւ-
նը խնդրեց երեսփոխանական ժողովն որ
եպիսկոպոսաց տալիք երգման առաջար-
կութիւնը ետ ձգէ, բայց ժողովը չընդու-
նեց այս խնդիրը: Գաւառական օրինաց
ծրագրին եօթն յօդուածներն արդէն ըն-
դունուեցան:

Բաղմաթիւ եպիսկոպոսներ ի ժողով
գումարեցան՝ դաւանական օրինաց նկատ-
մամբ բռնելիք ընթացքին սրտելու հա-
մար:

Բէշթա 12 մարտ.

Անարասի կոմսը մեր քաղաքն եկաւ:
Արտուի թէ իր ներկայութիւնը պիտի
զիւրացնէ միաբանեալ կուսակցութիւննե-
րէ նախարարութիւն մը կազմելու գործը:

Փարիզ 12 մարտ.

Առաջարկեալ պարապրոզէն ետեւ
կառավարութիւնը մտնոյ վերաբերեալ
նոր օրէնքը ժողովին պիտի ներկայացնէ:

Իր հաւատուէն թէ 45 միապետական
երեսփոխանը մեղադրանաց առաջարկու-
թիւնն մը պիտի ներկայացնեն վերջին պա-
տերազմին ժամանակ Պ. Կամպիթի պի-
վարչութեան ներքեւ գտնուող ազգային
պաշտպանութեան կառավարութեան գէմ:

Չինուարականաց ոչ մէկուն հրաման
չարուեցաւ Չաղաչըրութ երթալու:

Մոսկով 12 մարտ.

Լուր կուտան թէ քարտուսան հըրո-
սախտ միւր երեցիք են Վալէնտինայի մէջ:
Մորիսի զգորտեալը հիւսիսային բա-
նակին հրամանատարութեան արձակ-
ուեցաւ, և Ալբրաի մարաթախան իր վը-
րաց առաւ նոյն հրամանատարութիւնը:

Տոն Քարտ Թօղայի Պիտարայէ գնաց:

Լոնտոն 12 մարտ.

Սոմ. Քոնս. 41 1/8

Փոխ 1863 57 3/4
» 1869 52 7/8
» 1871 57 1/4
» 1872 65

Անգլ. Բոնս. 92 1/4

Լիւկսեմբուրգ 11 մարտ.

Բաւարի Միտլինկ—Օրէն 8—8 1/8

Մարտի 12 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կոյսրեական հշտմանաւ:

Իհրա ճէմլէթիի նախագահ Ահ-
մէտ Շէվքէթ պէյը Կ. Պոլսոյ քաղա-
քայեւտ անուանեցաւ փոխանակ իս-
մայիլ փաշային:

Երէկ իրիկուն Մեծ—Եպարքոսը
մեծ կողունք մը տուաւ Սպարապե-
տի դուռը Տէրութեան նախարարնե-
րուն եւ դեսպանաց:

Հեռագրական տեսութիւնը կը
ծանուցանէ հասարակութեան, թէ
մասնաւորաց կողմէ թունաշնամով կամ
գաղտնի լեզուով գրուած հեռա-
գիրներ չպիտի ընդունուին հեռա-
գրական կայարաններէն, և դուրսե-
րէն եկածներն ալ հասցէի տէրերուն
չպիտի զրկուին:

Գաղաղեան Յակոբ Էփենտին Ղա-
ւաթիլոյ դայմագամութեան պաշտո-
նին վրայ վերադարձնելու հաստատուե-
լի վեր ըստ իր զորքեր ձերբակալեց
Ղաւաթիլոյ մէջ, զոր ժամանակէ մ'ի
վեր իրենց շահատակութեանց առ-
պարէզ ընտրած էին: Չերբակալեալ
գործերուն մէջ քանի մ'ալ կանայք
կան:

Չորեքշաբթի առաւօտ Բերայի
չիտակ ճանքան Տըմիլիլի մեծ վա-
ճառատունը վերի յարկէն բռնկե-
լով, նոյն յարկը միայն այրելէ ետեւ
հրդէն հրկովեցաւ: Ոսկայն Պ. Կոլա-
նէօր անուն 65 տարեկան հունգարա-
ցի դատաւոր մը նոյն յարկին մէջ ու-
նեցած սենեկէն չկրնալով փախչիլ,
մուկէն խզուած գտնուեցաւ:

Պոլսոյ գեղին մօտ լեռը վրանի
տակ բնակող քիւրտ բնականը մը,
որ 10 յարկ անդամէ կը բաղկանար,
ամբողջապէս սառած գտնուեցան անց-
եալ շաբթուան ցուրտէն:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍՅ ԱՍԵ ՌՍԵՐՈՒՄԻԵ

1 մարտ. ուրբաթ իրիկուն 46.30
2 » շաբաթ առաւօտ 46.34
բացուեցաւ 46.25
կէս օր

Կ. Պոլս 1 մարտ.

Ետիմիլ Ժէնէրալի բաժինը Անգլ. լիւր 6.13
» փոխանակութեան 4.

Կ. Պոլսոյ Պանքային » 4.33
Բրէտի ժէնէրալ » 8.
Բրէտի Օսթրո—Թիւրք » 3.20
Երկրորդ շին » 111
» 49
Փոխ. 1863 » 308
» 1865 » 340
» 1869 » 275
» 1872 » 6 70
Փոխ. 1873 » 273
Թրամսէյ » Օսթ. լիւր 7.40

ԸՆԹԱՅՔ ԴԻՄԱՐՏ

1 ՄԱՐՏ

Անգլ. Բոնս. 92 1/4 444. 3
Ն. Բոնս. 92 1/4 88 3
Ետիմիլ Բոնս. 92 1/4 90
Դ. Բոնս. 92 1/4 51. 22
Գ. Բոնս. 92 1/4 405
Չինուարաց 92 1/4 423

ԱԶԳԱՅԻՆ

Իր բնիք թէ խառն ժողովն ե-
րէկ օրոշեր է 15 օրէն Բնիք ժողով
գումարել պատրիարքական ընտրու-
թիւն կառավարու համար, Սահմ.
վերաքննութեան խնդիրն ետքի թող-
լով:

Իր բնիք դարձեալ թէ Սահմ.
վերաքննիչ յանձնաժողովն իր գոր-
ծը ընթացիկով երէկ իր տեղեկագրի-
քն ստորագրեր է:

Օրագրոյ հրատարակած տեղե-
կութեանց նայելով, յիշեալ յանձ-
նաժողովը տարիէ մ'ի վեր քննե-
րէն եւ վերաքննիչի կէտ մը չէ
դաւեր Սահմանադրութեան մէջ մի-
այն վարչական տեսուչ խորհուրդներն
ի մի ձուլելով փաղ. ժողովոյ համա-
տիճան եւ համազօր տեսուչ ժողով մը
նահանսելու պէտքն զգացեր է:

Ովրատիոսի յղի լեռան առաւել
ասկէց աւելի յարմար պարագայի մը
չէր կրնար պաշտածիլ:

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՈՆԻՈՒԹԻՒՆ

Երկու տեսակ պաշտօնեութիւն
կայ մեր ազգին մէջ. թոշակաւոր եւ
ձրի: Ասանց թէ՛ դիրքը թէ՛ հանգա-
մանքն եւ թէ՛ պայմանները բնակա-
նաւոր կը տարբերին իրարմէ: մէկը
ապրուստի միջոց է, միւսը առաքի-
նութեան մէկուն վարձատրութիւնը
նիւթական է, միւսինը բարոյական:
Եւ որովհետեւ աշխարհի մէջ ապրուս-
տըն ամեն բանէ առաջ է, թոշակա-
ւոր պաշտօնեայ մը հարկաւ աւելի
կը յարկ իր պաշտօնին քան անթո-
շակ պաշտօնեայն: Առաջինն իր ապ-
րուստի միջոցը ձեռքէ չը հանելու
համար՝ մանաւանդ երբոր ուրիշ ապ-
րուստի միջոց կամ նոյն թոշակն ու-
րիշ պաշտօնի մը մէջ դանելու դիւ-
րութիւն չունենայ, կը հարկադրի ոչ մի-

ՊԱՅՄԱՆՔ

Գուրոս գացած լրագրաց հան. ու
ձախքը թմբագրութեան վրա
Լրագրոյ վերաբերեալ: Կատ
կամ որ եւ ինչ գրութիւն քորս գլ
—Տնօրէնին պիտի ուղարկուի, Գ
իւ, Չինիլի խան, Մասիսի գրասեն-
նակը:
Ճամբու ձախքը չվճարուած էա
ձախ չընդունուիր:

այն փութով և ճշգրտութեամբ իր պաշ-
տօնին պարտականութիւնները կատար-
ել, այլ և զինքը կարգօրէն երբեք հը-
րահանգայն և հրամանացը հնազան-
դիլ, իրեն դէմ ելած նիւթական և
բարոյական դժուարութեանց դէմ
մրցիլ, և ինչպէս ռամկօրէն կրնան,
հով դարու ծակերը գիտել: Իսկ երկ-
րորդն այնպէս չէ, երեսփոխանական,
վարչական կամ ժողովրդական ընտ-
րութեամբ անձնակազմին պաշտօն
մը կատարելու կը կոչուի. եթէ սըր-
տին մէջ կ'զգայ իւր ազգին կամ ե-
կեղեցւոյն ծառայելու յօժարութիւն,
և եթէ ժամանակն ու միջոցները կը
ներեն, կընդունի այն պաշտօնը, և
փոխարէն ուրիշ բան չ'ապահով, եթէ
ոչ զինքն ընտրողաց վստահութիւնը
յարգէ ու դժուարութիւնը, կամ երկ-
նային վարձատրութիւն մը: Այս
կերպ պաշտօնաւորի մը դիրքը բնա-
կանաբար աւելի պատուաւոր, աւե-
լի անկախ է, սիրտն ալ աւելի փո-
փուկ և դիւրադիւր. փոքրիկ ա-
նարկանք մը զինքը ծանրապէս կը
վիրաւորէ, թեթեւ դժուարութիւն
մը կամ արգելք մը զինքը կը թու-
ցնէ, կը լքուցանէ, սիրտը կը պա-
զի պաշտօնէն և կը հրաժարի: Խիստ
քիչ կը գտնուին ձրի պաշտօնաւորք
որ անյողօղոք հաստատմութեամբ
գիտման, արգելքներու և դժ-
ւարութեանց դէմ մաքառին եւ ի-
րենց պաշտօնը մինչև 'ի պայմանա-
ժամ շարունակեն: Բայց այս մաքա-
ռումն ու դիմադրութիւնն ալ սահ-
ման մ'ունի. այն է անձնական պատ-
ւոյ կամ հասարակաց շահու վտան-
գը: Երբոր դժուարութիւններ կան
իր դէմ, թէ և անիրաւ, երբոր իր
անունը բամբասանաց ենթարկուե-
լու կամ իր պատճառաւ պատուի-
տում, վէճ և կռիւ ծագելու հա-
ւանականութիւն կը տեսնեն, իր պատ-
ւոյն նախանձախնդիր անձ մը չ'ենալ
այլ ևս այն պաշտօնին դուրսը, եւ
անմիջապէս կը ձգէ կը քաշուի: Այս
է ձրի պաշտօնաւորաց բնական եւ
բանաւոր ընթացքը:

Ով որ այս ընթացքէն խտրուի է,
ով որ իր դէմ ելած դժուարութեանց
հակառակութեանց դէմ 'ի սպառ-
մաքառելու ելեր է, իր պատուոյն և
հասարակաց օգտին վնաս պատճա-
ռած է միշտ: Իր պատուոյն, որով-
հետեւ «հարկաւ շահ մ'ունի», սովոր-
իք մ'ունի որ պաշտօնին փակեր մը-
նացեր է և հրաժարիլ չուզեր: Ըստ
են և կրնան: Հասարակաց օգտին, ո-
րովհետեւ իր յամառ ընդդիմութեան
երեւոյն դժուարութիւն ու երկպառա-
կութիւն մանաւանդ դպրոցներ դո-
ւած, նիւթական և բարոյական շա-
հեր ծանրապէս վնասուած են, և այ-
լուն և այլն: Օրինակներ յիշելու կար-
ծենք հարկ չ'լայ. շատ թաղեր, շատ
քաղաքներ, շատ դաւառներ ասոք
